ԻՆՉԻ՞ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԳԵՑՆԵԼ ՍԽԱԼ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

ԿԱՄ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒ Է ՊԱԿԱՍԵԼ ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆԸ

Վերջին շրջանում մեզանում դեֆիցիտ ապրանքների թիվը բազմապատկվել է: Դատարկվել են նույնիսկ մթերային խանութների վաճառասեղանները: Գնորդները, օրինակ, դժվարությամբ են ճարում հրուշակեղեն, իսկ մակարոնեղեն ընդհանրապես չկա: «Դա՞ էլ պայմանավորված է շրջափակումով, թե՞...»,— հարցնում են մեր ընթերցողները: Հարցին պատասխանելու նպատակով մեր թղթակիցը եղավ ՀԽՍՀ առևտրի մինիստրությունում, Երքաղխորհրդի գործկոմի առևտրի վարչությունում, ինչպես նաև այդ ապրանքեսի թողարկման այնպիսի խոշոր ձեռնարկությունում, ինչպիսին հրուշակեղենի-մակարոնի կոմբինատն է:

Նախ՝ հրուշակեղենի մասին: Լավ հաշվարկները սխալ էին. արագ սպառվեցին ոչ միայն նոր թողարկվածը, այլև մնացորդային պաշարները: **Փաստորեն անտեսվել է ոչ միայն արտադրության դինամիկ զարգացման պահանջը, այլև հանրապետության ու նրա մայրաքաղաքի բնակչության մեխանիկական աճի հանգամանքը, որը հուշում է, որ հնարավորության դեպքում պլանը պետք է ավելի բարձր լիներ, քան նախորդ տարի:**

Դրությունն ավելի վատացավ սեպտեմբեր ամսին, երբ հանրապետության շրջափակումը ամեն մի ասպարեզում սկսեց անել իր սև գործը: Այս ամսվա առաջին 22 օրերին, օրինակ, հրուշակեղենի—մակարոնի կոմբինատում նախատեսված էր թողարկել 2159 տոննա հրուշակեղեն, սակայն որոշ հումքատեսակների մատակարարման խափանման պատճառով արտադրվեց 1537 տոննա: Ցավը միայն այն չէ, որ պլանավորվածից 622 տոննա պակաս է արտադրվել, այլ այն, որ թողարկված քանակն էլ կոմբինատը չի կարողացել իրացնել՝ մեքենա, ավելի ճիշտ բենզին չլինելու հետևանքով: Եվ ի՞նչ. **սեպտեմբերի 25-ին, երբ եղանք կոմբինատում, այնտեղ կուտակված էր 424 տոննա հրուշակեղեն:**

Ճեղքվածքն է՛լ ավելի մեծ է մակարոնեղենի առաջարկի և պահանջարկի միջև: Պատճառը դարձյալ միայն շրջափակումով չի պայմանավորված: Ճիշտ է, սեպտեմբերին այդ երևույթի հետևանքով մակարոնեղեն արտադրող ձեռնարկությունները նախատեսվածից շուրջ 50 տոկոսով պակաս են ալյուր ստացել ու, բնականաբար, պակաս արտադրանք թողարկել, սակայն փաստ է նաև, որ նախորդ ամիսներին, երբ շրջափակում չկար, պլանը դարձյալ չի կատարվել: Այսպես, **8 ամսում պլանավորված 10956 տոննայի դիմաց թողարկվել է միայն 8876 տոննա մակարոնեղեն:** Երբ հետաքրքրվեցինք, թե ինչու է առաջադրանքը թերակատարվել, գործը տնօրինող անձինք պատասխանեցին՝ պահանջարկ չի եղել: Այն, որ պահանջարկ եղել է ու կա, անզեն աչքով էլ է նկատելի: Համենայն դեպս, որպեսզի դրանում համոզվեն այդպիսի պատասխան տվողները, խորհուրդ ենք տալիս մտնել որևէ մթերային խանութ, մտնել հատկապես այն ժամին, երբ խանութը մակարոնեղեն է ստանում: **Այդ մթերքի համար առաջացած հերթը գուցե վերջապես ստիպի նրանց փոխելու կարծիքը, հանգելու այն եզրակացության, որ սխալ են թույլ տվել ու դրանով դեֆիցիտ ապրանքների ցուցակը նոր անուններով համալրել:**

Իհարկե, միայն սխալը գիտակցելով իրադրությունը չի փոխվի: Հարկ է, որ գոնե այդքանից հետո մեր արտադրությունները մոբիլիզացնեն բոլոր ուժերը, եղած ամեն մի հնարավորություն օգտագործեն թե՛ հրուշակեղենի և թե՛ մակարոնեղենի արտադրությունն ավելացնելու, թողարկված արտադրախմբաքանակներն օպերատիվ ձևով առևտրական օբյեկտներ հասցնելու համար: Հակառակ դեպքում, հատկապես շրջափակման ձգձգման հետևանքով սպասվող նոր դժվարությունների առկայությամբ, այդ կարևոր արտադրատեսակների առաջարկի և պահանջարկի միջև խզումը ավելի կմեծանա: Այն ժամանակ դրա համար պատասխանատու անձանցից հարկ կլինի ավելի լուրջ պատասխան պահանջել:

Ա. ՍԱՐՑԱՆ